ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/05 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան **«15» հունվարի 2019թ.**
ժամը 10-00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լիանա Վարոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գայանե Նազարյան

Հրանուշ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Չոբանյան

1. « ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/05» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման մասին.
(Լիանա Վարոսյան)

1.1 Հաշվի առնելով «Տուբերկուլոզի դեմ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սննդի պատրաստման ծառայություններ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/05» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկներն ու մասնակիցների կողմից ներկայացրած հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունն այն մասին, որ նշված ծածկագրով մրցույթի մասնակից «Եղվարդի Նեկտար» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց պարտավորություններ, սակայն մասնակիցը Պեկ-ից ստացված տեղեկատվության օրվան հաջորդող օրը ներկայացրել է իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ արձանագրված է, որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել որևէ հարկային պարատավորություն, այլ ունեցել է գերավճար միասնական հաշվում /քաղվածքները կցվում են/, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված գրությունը/կցվում է/, որտեղ արձանագրված է որ «Եղվարդի Նեկտար» ՍՊԸ-ն 24.12.2018թ. դրությամբ ժամկետանց պարտավորություն չի ունեցել: Հայտնում ենք նաև, որ 2019թ. հունվարի 11-ին «Տուբերկուլոզի դեմ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարություն գրություն է ուղարկել «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/05» ծածկագրով ԳՀ ընթացակարգի պարզաբանման վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տուբերկուլոզի դեմ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը պարտավորություն ունի ապահովել հիվանդների ամենօրյա սնունդը, հանձնաժողովը որոշեց՝

1.2 Չափաբաժին 1-ով հաղթող ճանաչել «Եղվարդ Նեկտար» ՍՊԸ -ին և ներկայացնել սննդի պատրաստման ծառայությունների ձեռք բերման նպատակով պայմանագրի կնքման առաջարկ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

2. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Լիանա Վարոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գայանե Նազարյան

Հրանուշ Հակոբյան

Քարտուղար Աննա Չոբանյան

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
TAX SERVICE

Անձնական գրասենյակ | Հաշվետվություններ | Օրենքներ | Նորություններ | Հետադարձ կապ | Օգնություն

Նորություններ

Անձնագրային տվյալներ

Վճարումներ

Հարկային պարտավորություններ

Ծանուցումներ

Հարկ վճարողներ

Աշխատողներ

ՀԴՄ ներ

Դրոշմապիտակներ և դրոշմանիշեր

ԵՏՄ գործարքների դարան

Դրամարկղային գրքեր

Արտոնագրային հարկ

Իմ Մասին

Անվանում	ԵՂՎԱՐԴԻ ՆԵԿՏԱՐ
ՀՎՀՀ	03307946
Հեռ.	
Հասցե	ԿՈՏԱՅՔ ԵՂՎԱՐԴ ՍԱՖԱՐՅԱՆ 15 չկա
էլ. փոստ	exvardnektar@mail.ru
Օգտվողի անուն	nektar1

[Ելք]

Փոխել գաղտնաբառը

Ծանուցումներ

11.09.2014 Նոր հաշվետվածնատեսակ

11.09.2014 Նոր հաշվետվածնատեսակ

21.02.2014 Հարկային հաշիվների համադրում

22.11.2013 Հարկային հաշիվների համադրում

22.08.2013 Հարկային հաշիվների համադրում

Բոլոր ծանուցումները

Տեղեկացում

Հարգելի հարկ վճարող

Հարկային հաշվարկների ընդունման, պարտավորությունների մարման և անձնական հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներկայումս գտնվում է փորձնական գործարկման փուլում, ինչի հետ կապված Ձեր կողմից արտատպված անձնական հաշվի քարտի քաղվածքում ներառված տեղեկությունները հնարավոր է վերջնական չլինեն, որը կարող է ճշգրտվել հարկային մարմնի կողմից:

Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին:

ԱՀՔ դիտում | Միասնական հաշիվ | Անցումային գերավճար | ԱՀՔ քաղվածք

Մնացորդ առ՝ 24.12.2018

Դիտել

Հարկի կամ վճարի անվանումը	Հարկի կամ վճարի չափը	Տույժը	Տուգանքը	Պարտավորության չափը (ընդամենը)
Ավելացված արժեքի հարկ	0	0	0	0
Ներմուծման մասով ավելացված արժեքի հարկ	0	0	0	0
Շահութահարկ	0	0	0	0
Եկամտային հարկ	0	0	0	0
Ակցիզային հարկ	0	0	0	0
Ներմուծման մասով ակցիզային հարկ	0	0	0	0
Շրջանառության հարկ	0	0	0	0
Արտոնագրային հարկ	0	0	0	0
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	0	0	0	0
Ներմուծման մասով բնապահպանական հարկ	0	0	0	0
Ոչ ռեզիդենտի շահութահարկ	0	0	0	0
Սոցիալական վճար (ամսական)	0	0	0	0
Սոցիալական վճար (տարեկան)	0	0	0	0
Պետական տուրք	0	0	0	0
Roylթի	0	0	0	0
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար	0	0	0	0
Ճանապարհային հարկ	0	0	0	0
Հաստատագրված վճար	0	0	0	0
Պարզեցված հարկ	0	0	0	0
Եկամտահարկ	0	0	0	0
Պարտադիր սոցիալական ապահովության վճար	0	0	0	0
Տուգանքներ և վնասի հատուցման գումար	0	0	0	0
Կուտակային վճար	0	0	0	0
Ընդամենը	0	0	0	0

Վճարման ենթակա գումարի տեսակ	Գումար	Գործողություն
Ընդամենը Միասնական հաշվին վճարման ենթակա գումար	0	Վճարել
Ընդամենը Պետ. տուրքի հաշվին վճարման ենթակա գումար	0	Վճարել

Դեբետային մնացորդ		Սահմանված չափից ավել վճարած գումարներ			Միասնական հաշվում առկա գումար
Ավելացված արժեքի հարկ	Ակցիզային հարկ	Մինչև 01.01.2018 թ.	01.01.2018թ.-ից հետո սոցիալական վճարի գծով (հաշվարկի ճշգրտման արդյունքում առաջացած)	Պետական տուրքի գծով	
189522	0	0	0	0	756893

Սույն քաղվածքը կազմվում է կազմման օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա, որը կարող է փոփոխվել հսկողական միջոցառումների արդյունքում կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ նոր տվյալներ առաջ գալու պարագայում: Քաղվածքում ներառվում է անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությունը սկսած 2018 թվականի հունվարի 1-ից:

Արտածել

Copyright © 2009-2019
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

«12» 01 2018 թ.

No

ՀՀ ԱՆ «ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ Լ.ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Քոչարյան,

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող *հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների*, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց *հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին*:

ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված են պետական հարկերը և պետական վճարները, որոնց նկատմամբ հսկողությունը վերապահված է հարկային մարմնին:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են հարկային եկամուտները:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ *դրոշմանիշային վճարը* զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով նույն *օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է*: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, մասնավորապես՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվել են տեղեկություններ հարկ վճարողների ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «ԵՂՎԱՐԴԻ ՆԵԿՏԱՐ» ՍՊԸ պարտավորությունները կատարելիս առաջնորդվել է բացառապես էլեկտրոնային համակարգի

անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելու հանգամանքը, խնդրում ենք «ԵՂՎԱՐԴԻ ՆԵԿՏԱՐ» ՍՊԸ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, 24.12.2018թ. դրությամբ չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

12.01.2019

X _____ ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ

Signed by: MASHADYAN RAFIK 3304710108

Կատարող՝ ԻՎ իրավ. խորհրդ.
և զարգ. բաժին հեռ. 060-544-748